ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն (մայրենի)

Թեմա՝ Կրթությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները, դրանց դրական ազդեցությունը

Կազմող՝ Աննա Հալևորյան

Սյունիքի մարզի Աճանանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

1. Ներածություն _____2
2. Փորձարարական հետազոտություն_____3
3. Եզրակացություն_____9
4. Օգտագործած գրականության ցանկ_____10
5. Հավելված_____11

Ներածություն

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլև գիտակից քաղաքացի ձևավորելը, ով կկարողանա՝

1) կողմնորոշվել ժամանակակից աշխարհում,
2) արտահայտել սեփական մտքերը,
3) դրսևորել ակտիվ և նախաձեռնող վարք,
4) ունենալ քննադատական մտածողություն,
5) վերլուծել կարդացածը, լսածը, տեսածը,
6) համագործակցել,
7) ունենալ հաղորդակցման հմտություններ,
8) լինել ստեղծարար, ինքնակազմակերպվող և ինքնուրույն,
9) տիրապետել տեղեկատվական տեխնոլոգիաներին,
10) ինքնակրթվել, ինքնազարգանալ։

ՏՀՏ կիրառությունն այսօր կարևորվում է և խրախուսվում։

Տեխնոլոգիաներն, անշուշտ պիտի կիրառվեն հանրակրթության մեջ և նպաստեն կրթության որակի բարձրացմանը՝ թողնելով իրենց դրական և բացասական ազդեցությունը։



Հետազոտությունը ճշմարտության որոնումն է. . .

Մեր անձնական, գիտնական և մշակութային կյանքը ենթարկվում է փոփոխությունների տեխնոլոգիաների հետևանքով: Մեր առօրյա կյանքում համընդհանուր կիրառության են ենթարկվում որոշակի բառեր և արտահայտություններ՝ համացանց, սոցիալական ցանցեր, բջջային հեռախոսներ, էլեկտրոնային հասցե:

Տարբեր ոլորտներում կարելի է տեսնել տեղեկատվական (ՏՏ) տեխնոլոգիաների ազդեցությունները, դրանց բերած փոփոխությունները:

Կրթությունն այն ոլորտն է, որն անմասն չէ այդ փոփոխություններից և որի վրա ազդեցությունը կրում է մասսայական բնույթ:

21-րդ դարը նշվում է որպես Գիտելիքի դարաշրջան, ժամանակաշրջան, որտեղ գիտելիքը համարվում է հիմնարար արժեք:

Կրթության ոլորտը դիտարկվում է, որպես երկրի կայուն զարգացման, նաև մադկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Այն ամենաբարդ ոլորտներից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի:

Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ոսումնական գործընթացում նաև հեռավար դասերի ընթացքում:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը ուսուցիչների համար նոր հնարավորություններ է բացում իրենց առարկան դասավանդելու հարցում, բարելավում է ուսումնառության արդյունավետությունը, աշակերտների ինտելեկտուալ մակարդակը, ինքնակազմակերպում և հեշտացնում է գործնական խնդիրների լուծումը:

Ուսուցչի նպատակը պետք է լինի նյութի ավելի լավ, պարզ և մատչելի ներկայացումը, ներկայացման ձևերի ընտրությունը, ինչը հնարավոր չէ կազմակերպել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Նյութերի մատուցման հետաքրքիր հնարները դասավանդման ընթացքը կարող են դարձնել ավելի ակտիվ մասնակցային, հետաքրքիր, կիրառելի, հիշվող և պայծառ:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հիմնական նպատակն է՝ իրազեկ, տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող, բարոյական և օրինապահ անհատի դաստիարակում, ով կկարողանա ինքնուրույն ձեռք բերել , կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել տեղեկատվությունը և դրա հիման վրա ինքնուրույն որոշում կայացնել, ունենալ համոզմունք, կարծիք և գնահատական օբյեկտին:

ՏՀՏ գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, ինչի շնորհիվ ուսումնական գործընթացը դառնում է ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է , այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա առաջացնում է պատասխանատվության զգացում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ կարելի է կիրառել դասապրոցեսի տարբեր փուլերում՝

- նոր թեմայի ներկայացման ժամանակ՝ լուսանկարներ տեսանյութեր, գծագրեր, շարժանկարներ և համառոտ տեսություն, ինչն էլ առաջացնում է հետաքրքրություն,
- նոր նյութին զուգահեռ՝ համառոտ տեքստեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ՝ նյութը լինում է հետաքրքիր և հիանալի, իսկ տրված առաջադրանքները կատարում են հաճույքով,
- անհատական աշխատանք աշակերտի կողմից՝ դառնալով ակտիվ մասնակից, փնտրող, գտնող, մտածող և վերլուծող: Սա նրանց սիրելի աշատանքն է՝ փնտրել, գտնել, մշակել, ինչու՞ չէ նաև՝ պատրաստել սահիկ դասի համար:
- գիտելիքների ստուգում՝ բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է ճանաչողական գործունեությունը:

  Նշեմ այն գործիքները, որոնք ես օգտագործել ուսումնական գործընթացում՝ դասապրոցեսի տարբեր փուլերում.

  Padlet- նոր թեմայի ներկայացում
  Nerpod- ինտերակտիվ բովանդակությամբ դասերի ստեղծում՝ նոր թեմայի ներկայացում
  Power Point- սահիկաշար պատրաստելու գործիք՝ նոր թեմայի ներկայացում
  Kahoot, Google Forms, Socrative, Quizizz- գիտելիքների ստուգում

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տվյալներով ՀՀ բոլոր դպրոցներում կան համակարգչային կաբինետներ և բոլոր 1433 դպրոցները միացած են Հայաստանի դպրոցների ինտերնետ ցանցին։

Ահա մի քանի վիճակագրական տվյալներ՝

- համակարգիչների քանակը մի դպրոցի հաշվով.

Սյունիք	7,9
Արարատ	11,3
Արմավիր	10,9
Շիրակ	9,7
Լոռի	8,7
Վայոց Ձոր	8,3
Կոտայք	12,5
Գեղարքունիք	10,6
Արագածոտն	8,5
Տավուշ	10,2
Երևան	19,0

- սովորողների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով

Սյունիք	18,5
Արարատ	27,2
Արմավիր	27,5
Շիրակ	20,3
Լոռի	22,7
Վայոց Ձոր	17,1
Կոտայք	26,7
Գեղարքունիք	24,5
Արագածոտն	18,6
Տավուշ	20,8
Երևան	24,3

- ՏՀՏ կիրառությունը դասավանդման համար

Հետազոտությունները ցույց են տվել, (2013թ.) որ վերապատրաստած ուսուցիչների 20% երբեք չի օգտագործել ՏՀՏ դասավանդման համար, 40% ՏՀՏ կիրառում է 1-2 անգամ:



Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշներ

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի N30-Ն հրամանի (05. 09. 2022թ.) `

ՏՀՏ ինտեգրում՝

- ուսուցիչը կարողանում է ընտրել ուսուցման այնպիսի ռազմավարություններ, որոնց համար նպատակահարմար է կիրառել ՏՀՏ,
- ուսուցիչը կարողանում է ՏՀՏ կիրառմամբ դասի բացատրությունը դարձնել ավելի մատչելի,
- ուսուցիչը կարողանում է իրականանցնել հիբրիդ և հեռավար ուսուցում՝ ըստ անհրաժեշտության,
- ուսուցիչը կարողանում է ՏՀՏ օգնությամբ իրականացնել ձևավորող գնահատում,
- ուսուցիչը կարողանում է կիրառել ՏՀՏ միջոցները՝ ապահովելով սովորողների ուսումնառության համար բազմազան մեթոդներ ինչպես նոր նյութի մատուցման, այնպես էլ գիտելիքների ստուգման նպատակով։

ՏՀՏ դրական ազդեցությունը՝

- դասը դառնում է հետաքրքիր, ինտերակտիվ
- բարձրանում է նյութի յուրացման մակարդակը,
- բարձրանում է սովորողի համակարգչային գիտելիքների յուրացման մակարդակը,
- ընդլայնվում են սովորողի տեսողական և լսողական ընկալման հնարավորությունները,
- զարգանում է սովորողի ստեղծագործական կարողությունները,
- հեշտանում է դժվար հասանելի նյութերի ցուցադրությունը,
- հեշտանում է տեղեկատվության կուտակումը,
- ապահովում է շերտավոր ուսուցում,
- բարձրանում է ուսուցման արդյունավետությունը։

Ես՝ իբրև ուսուցիչ, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները՝

- խնայում եմ անձնական ժամանակը,
- տեսնում եմ աշխատանքի արդյունքը,
- ստանում եմ բավարարվածություն,
- անընդհատ զարգանում և կատարելագործվում եմ որպես մասնագետ,
- ձեռք եմ բերում նոր հմտություններ։

Եզրակացություն

Անվիճելի է, որ ժամանակակից դպրոցում համակարգիչը չի լուծում բոլոր խնդիրները։ Ուսումնական գործընթացում ոչ պակաս կարևոր են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները։

Եթե մանկավարժական տեխնոլոգիաների և տեղեկատվական տեխնոլոգիաների ընտրությունը ճիշտ է և համապատասխան, ապա ստեղծվում է ուսուցման անհրաժեշտ՝ ավելի բարձր և ընդունելի մակարդակ։

Թույլ տվեք ներկայացնել առաջարկություններ՝

1. մրցույթների կազմակերպում՝ ՏՀՏ դասերի պլանների կիրառմամբ,
2. գործիքների մրցույթ,
3. համակարգիչներով զինում։

Օգտագործված գրականության ցանկ

- Յու. Բաբանսկի «Ինչպես օպտիմալացնել ուսումնական գործընթացը», Կրթություն, 1998

- https://hetq.am/hy/article/8799 ՏՀՏ-ն և կրթությունը
- www.osf.am/wp-content/uploads/2017/11/ՏՀՏ -կիրառությունը-Հայաստանի-դպրոցներում-համառոտագիր,pdf

Հավելված

Դասի պլան

Առարկա՝ մայրենի

Դասարան՝ 5-րդ

Թեմա՝ Գ. Սարյան՝ «Կարոտ»

Լեզվական նյութ՝ Ու ձայնավորի հնչյունափոխությունը

Կազմող ուսուցիչ՝ Աննա Հալևորյան (Աճանանի միջնակարգ դպրոց)

Նպատակ՝

- ✓ հարստացնել բառապաշարը
- ✓ սովորեցնել նոր բանաստեղծություն
- ✓ ներկայացնել ու ձայնավորի հնչյունափոխությունը

Վերջնարդյունքներ՝

- ✓ վերաշարադրի կարդացածի բովանդակությունը,
- ✓ սովորի նոր բառեր (հոմանիշ, հականիշ),
- ✓ իմանա երգի հեղինակին (այդ խոսքերով գրված),
- ✓ կազմի բառեր, ցույց տա հնչյունափոխությունը,
- ✓ դրսևորի ստեղծագործական, քննադատական մտածողություն։

Կարողունակություններ՝

- ✓ սովորել սովորելու կարողունակություն,
- ✓ լեզվական գրագիտության կարողունակություն,
- ✓ մշակութային կարողունակություն։

Խաչվող հասկացություններ՝

- ✓ օրինաչափություն,
- ✓ կառուցվածք և գործառույթ,
- ✓ կայունություն և փոփոխություն,
- ✓ անհատական և մշակութային արժեհամակարգ։

Անհրաժեշտ նյութեր՝ Դասագիրք, տետր, ուսումնական նյութ,երգ,գրատախտակ

Միջառարկայական կապ՝ բնություն

Դասի ընթացքը

Ամփոփում ենք նախորդ դասը։

Դասի կառուցվածքը ԽԻԿ համակարգով է։

Ի՞նչ գիտեն կարոտի մասին, ի՞նչ է կարոտը, ե՞րբ են զգում։ Լսվում են տարբեր կարծիքներ (խթանում)։

Գ. Սարյան «Կարոտ»

Բանաստեղծության ընթերցում, մեկնաբանում (աշակերտների կողմից)։

Այս ամենին զուգահեռ նաև կարճ և համառոտ տեղեկություն Գ. Սարյանի մասին (իմաստի ընկալում)։

Լեզվական նյութ՝ տեքստից դուրս են գրում կարմիրով գրված բառերը (ջրեր, մանկանար), առանձնացնում են արմատը, ածանցը, բացատրում արմատներում կատարված փոփոխությունները։

ջրեր ► ջուր (ու → ը)

մանկանար ► մանուկ (ու ↑)

Ուսուցիչը բացատրում է Ու ու ձայնավորի հնչյունափոխությունը։

Կատարում են վարժություն 1՝ էջ 183։

- ❖ Համեմատի՛ր դեմ դիմաց գրված բառերը և ցույց տուր, թե ի՞նչ հնչյունափոխություն է կատարվել։
  մուր → մրոտ, մեղու → մեղվաբույծ, նուռ → նռնենի, առու → առվակ, աղմուկ → աղմկել, սուր → սրամարտ, ծուխ → ծխախոտ, ածուխ → ածխամարտ,
  մասուր → մասրենի, բլուր → բլրակ, թթու → թթվաշ, ապուշ → ապշել։

Բանաստեղծությունը մեկնաբանում են չափածո կամ արձակ և դնում նոր վերնագիր՝ ունկնդրելով Մարտիկի երգը (խոսք՝ Գ. Սարյան, երաժշտ. ՝ Ա. Սաթյան)։

Գրել տրված բառերի հոմանիշները և հականիշները։

զով-
մանուկ-
նկուն-

Առաջադրանքի կատարում՝

Գրել նամակ մորը՝ զինվորի անունից։

Կշռադատում՝

Կարդալ բանաստեղծությունը, նշել, թե ինչ տրամադրություն է այն առաջացնում։

Ամփոփում և գնահատում

Տնային աշխատանքի հանձնարարում ՝

սովորել բանաստեղծությունն անգիր կամ երգել «Մարտիկի երգը»,
վարժություն 2,3՝ էջ 183։





«Յուրաքանչյուրոք կարող է սովորել ,միայն թե ո՛չ միևնույն օրը և ո՛չ միևնույն ճանապարհով»

Ջորջ Էվանս